

ԱՅՆԵՏԱԿԱՆՑ

(Տիկ յ'էջ 220)

ԺԵ

ԳԵՂՈՐԳ ԿԱՄԱՀԱՆԱՊԵՏ ԹՂԹԱՏԱՐ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆ ՎԵՆԵՏԱՑ



ՅՍ Սուրենան ճարտար Հայոց և անոնցմէ առաջ յիշուած լեզուագէտ և գործունեայ Գէորգայ և իր որպայն Մարկոսի նըման լեզուագէտ և ճարպիկ Գէորգ մ'ալ որդի Ծովհամենոց, զբեթէ անսնց ժամանակակից, աւելի գծուար ծառալութիւն կամ գործ ըրած է վենետիկայ տէրութեան, արզարեւ գծուար ժամանակ մի, երբ Օսմանեանց գէմ պատրաստութիւն կար պատերազմի և մեծ նաւամարտին (1570): Ինքն խակ Գէորգ իրեն հանդիպածը կը զրէ խտալերէն, յորդորմամբ Մարկոս-Ռինոսն Պարագարոյ ազնուականի, որ ատեն մի վենետիաց Պայլ այլ եղած է ի կ. Պօլիս (1568-74). և կ'իմացընէ որ մինչ ինքն ի Ռակուզա էր իր ապրանքները ծախելու համար, Յոյն մի զինքը զուա և հարցուց թէ ի՞նքն է Գէորգն, և ստուգելով՝ հանեց թուղթ մի, զոր յիշեալ Մարկանսոնիոսն (ի վենետիկ ըլլալով այն ատեն) կը յանձնէր Գէորգայ՝ որ ատենի ի Պօլիս, այն ատեն հօն եղած Պայլին կամ սնոր փոխանորդին: Գէորգ քիչ շատ գժարեցաւ այս վուանցառը գործոյ, բայց քաջալերուելով թուղթը յանձնողէն՝ յանձն առաւ: Յայս է որ իր ճարտարալութիւնը արդէն ծանօթ էր վենետակայ տէրութեան: Զատկի տօնը կատարելով, ցամաքով ճամբայ եղաւ. երբ հասաւ ի Սպորիս քաղաք Պոսնիոյ, ետեւէն հասան Գոստայի վզյլուտայէն խարուած երկու թուրքք, և հարցուցին կարաւանին թէ մէջերնին Հայ կայ. Գէորգ՝ որ ընկերաց հետ այն ժաման նախաճաշ կ'ընէր, իմացաւ որ զինքը կը փնտուեն. նամակը զերե էր ի ծոցը, որ երր վտանգ հասնի՝ ծածուկ դրսանետ. բայց հիմայ լուսեաց աչքի տակ չէր կըրնար այս բանս ընել. որիշ ճար շզուաւ, բայց եթէ ճեռքի հացին հետ թուղթն ալ պատառ պատառ կը նել: Բոնեցին տարան զինքը վոյլուտային, որ հարցուց թէ թուղթ կայ քովը. երբ ժխտեց, մերկացընել տուին և ինչուան կօշիկներաւն յատակը քննելով բան յի զուան. յեսոյ խարեցին իր ապրանքն ալ քննելու. հօն ալ բան չգրտնելով՝ կապել և ծեծել տուին՝ որ խստովանի թուղթերը ո՛ւր պահած ըլլալը. նա միշտ կ'ուրանար. և իբրեւ կիսամահ թողաւած գարձաւ ի կարա.

ւանն, և նորէն ի ճամբայ ընկաս հասաւ ի կ. Պօլիս, Համբարձման տօնէն վերջը. քանի մի ամիս կեցաւ հօն, զիտեց, տեսաւ և լսեց Օսմանեանց մեծ և անդադար պատրաստութիւնն մեծամեծ նաւեր շինելու և զինելու, 200էն տաելի, և ամէն կողմէ նաւաստի ժողվելը. իմացուց Պայլին իր ով ըլլալն, և երկու թուղթ առաւ անկէ ի վենետիկ բերելու. օգոստոս ամստուն ելաւ ի Պօլսոյ զբեթէ նոյն ճամրով զառնալու. ամեն տեղ կը տեսնէր թուրքաց մեծ պատրաստութիւն պատերազմի, և պաշար զրո կը տանէին յԵէնի գալէ: Երբ հասաւ ի Ռակուզա և իմացուց քաղաքապեսին՝ ինչ բանի համար գալն և երթալը, նա թող շտուաւ որ երթայ ի վենետիկ, այն ասեն հօն հիւսնզութիւն ըլլալուն համար. այլ թուղթերն առաւ և զրիեց. իսկ Գէորգի նորէն հրաման եկաւ երթալու ի Պօլիս, բայց ինքն իր տունը կենալու պէտք ունենալով՝ իր մէկ ազգականին յանձնեց զործը, որուն խոստացուեցաւ որ երբ զառնայ՝ 40 զալէր վարձք տան. իսկ ինքն քիչ ասենէ նաւ մուսաւ երթալու ի վենետիկ, բայց օդոց և ծովու խառնակութեան պատճառաւաս. 50 օր քեց նաւարկութիւնն: Հօս վերսիկիւալ ազնուականին ինզրով զրից այս ամեն յիշուածը. զրուածքին թուական չկայ (օրինակին մէջ) բայց 1574ին պիտի ըլլայ, որակինեւել Պայլն ի Պօլսոյ զրած է առ Գուրցն ի 44 օգոստ. 1570, թէ ի Ռակուզա զացողն զեր ճամբայ ելած չէ. յաջորդ տարին (1571) ապրիլի 22ին ալ կը զրէ, որ ի Ռակուզա զացող Հայուն թուղթեր տուած է. բայց տարակուածլով որ ուշ պիտի հասնի, թղթոց ուրիշ օրինակ մ'ալ կը խարե ուրիշ ճամբով: Գէորգայ ըսածէն և ըրածէն (ի վենետիկ զալու փութալէն) կ'իմացուի որ ընտանիք ալ ունէր քաղաքին մէջ. բայց երկար տաեն չկեցաւ անոնց քոյլ, որովհետեւ այն ասեններ իր ճամբարզութեան մէջ տեսած թուրքաց պատրաստութեանց, և թերեւս իր տարած ու բերած թղթոց՝ հետեւանքն կատարուած էր, լեպանվեան մեծ նաւամարասով. Վենետիկ թէ և յաղթողք կամ զանակիցք յաղթողաց, ասոնց իրարէկ զատուելէն վերջը՝ նորէն սկան վախնակ իրենց հակառակորդներէն, և շուտով խօսեցան հաշառութիւնն, որոյ պայմանները հաստատելու և կնքելու համար զեսպան ընտրեցին (5 ապրիլ, 1572) զԱնզրէսա Պատուէր, և Պայլ զԱնասոն թէսփոլոյ, ասոնց իրեւս թարգման ընկեր զրուեցաւ Գէորգ. շորս խալէիւք ճամբայ ելան ի 22 յունիսի. երկու ամիս վերջը (28 օգոստ.) հասան մոտան ի Բերա. կէս տարի վերջը հաշտութեան պայմաններն կնքեցան (18 փերր, 1573). — և առանց ուշանալու զեսպաննն ճամբայ ելաւ (27 փերր.) զառնալու ի վենետիկ. անսուրակյու Գէորգ ալ մէկտեղ, որուն զարձն սեծ բազդ ալ եղաւ իրեն. վասն զի՞ ինչպէս իր պատմածէն կըրնայ զուշակուի՝ կրնար կասկածելի անձ մի համարուիլ Դրան առջեւ. և երբ այս եաքի ձըմեա (1572) զեսպանին ընկերներն ճանձրացած ի Պօլիս կենալէն՝ պաշնագրութեան պայմանաց ուշանալուն պատճառաւ՝ կ'ուզէին թողով զառնալ իրենց տեղը, մեծ զգուակն (Մէհմէմիշ) արդիեց, սպանալով երկաթի անուրներ անցնելու. անոնց վիզը և այնպէս զարձնելու. իսկ անոնց հետ եկող թարգ-

մանը (որ էր Գէորգ) ի ցից հանել⁽¹⁾: Իրաւոնք ուներ ուրեմն Գէորգ գրել՝ որ վսանգաւ կենաց կամ մանու կ'ընէր իր այսպիսի ճամբորդութիւները՝ յօդուա Հասարակապետութեան, երբ ոչ ոք կը համարձակէր այնպիսի բան մի յանձն առնուլ. իսկ ինքն քանի մի անզամ ըրաւ այն վսանգալի ճամբորդութիւնը և թղթատարութիւնը, թուղթերն ալ ուրիշ երկու Հայոց ձեռօք կը հասցընէր առ Պայն, որ վախէն շատ հեղ և ոչ կուռը կը բանար, այլ պատուհանէն կ'ընդունէր կամ կու տար տալիքը՝ ապահով ատեն մի: Այս ըրած ծառայութեանց համար՝ իրաւ պայլերէն և գեսպաններէն բարի վկայագիրներ ընդուներ էր, բայց ոչ և արժանաւոր վարձք. սակայն ինքն հաստարձութեամբ դարձեալ յանձն առաւ երթալու ի կ. Պոլիս Յակոբ Սորանցոց գեսպանին հետ, երբ սա ընտրուեցաւ (25 յանու. 1575) երթալ շնորհատերելու Մորգաս Գի թագաւորելը. գարձաւ յաջորդ տարին (1576, նոյեմբերի 8ին,) և Երերակուտին առջեւ ճառօրէն պատմեց իր գեսպանութեան դործը, ըրածը, ըսածը և տեսածը:

Իբրև փոխարէն ծառայութեանցն Դուքսն կամ Երերակոյան շնորհեց Գէորգայ (1544ին) վաճառականաց միջնորդ (սէնասալ) ըլլալ, որ բաւական շահաբեր բան մ'էր. բայց նաև խափանուեցաւ գործողութիւնէն, նախ՝ Սորանցոց գեսպանին հետ ի Պոլիս երթալուք, վերջն ի գարձին (1576) վենետիկոյ մէջ պատահած մեծ ժանապարհին համար, որ ամեն առուտուր գարեցացեր էր. բայց երբ քիչ մի թեթեւցաւ մարզաման՝ Գէորգ աղերսազով ինդրեց Երերակուտին (24 մարտ, 1577) որ ի վարձ իր այնքան վսանգաւոր ճամբորդութեանց շնորհուի իրեն փոխանակ հասարակ սէնասալութեան, քաղցին Ս. Մարկոս մեծ հրազդարակի և քաղաքը երկու բաժնող անուանի և մէկ հատիկ Ռիխարդց կամուրջի կողմանց սէնասալ ըլլայ, որ շատ ամելի շահաբեր էր, և կըրնար անուլ քիչ մի հանգիստ իր ընտանիքը պահել⁽²⁾: Երերակոյուն պատուիրեց այլ և այլ պաշտօնէից տէրութեան (վաճառականաց դունցերու, Consoli de Mercadanti, Հասարակաց փաստաբանի, Աνօգածուրի կամ Վաճառելիքի գործութեան պատուածքներու, Officiali alla Massettaria) որ քննեն Գէորգայ ինպիրը, առուգեն և ինչ որ կը վայէ ըսեն. Այս երեք պաշտօնարարնաց գործածն ալ չըստեցաւ Դիւանաց մէջ, ուր այն տարիներուն այսպիսի գրուածք կը պակսին. որով չէինք կրնար առուգին ըսել, այլ շատ հաւանականութեամբ՝ որ կատարուած ըլլայ Գէորգայ ինդիրն, ինչպէս գրեթէ ամեն անզամ՝ կատարուած է նոյն ատենները միւս ծանօթ Հայոյն (Սորեան Անտոնի): Բարեբազարար հինգ տարի վերջը վաճառա-

1. E avrebbe fatto imparare il Dragomano che fosse venuto con noi.

2. Hora mò che mi pensava di guadagnar mi un pezo di pan per sustentar et mi et casa mia, hanç fatto Sansarij Ordinarij; siche il merito et la gratia che mi haveva concesso Sua Serenità, è andato zoso. Però di novo La supplico a farmi un altro merito, a fine che possa sustentar casa mia. Offrendomi sempre servir Sua Serenità in ogoj occasione che da S. Serenità sarà ricercato.

կանութեան Հինգ Գիտուն կոչուած պաշտօնեայք իրենց մէկ պատասխանին մէջ առ Դուքսն կը վկայեն՝ որ շնորհուեր էր Գէորգայ խնդրածը։ Սակայն շատ ատեն շանցած՝ Քառասնից մեծ պաշտօնեայք այն աեսակ (Ծիալզայի) սանէրութիւնը դազբեցուցին, որով Գէորգայ շահն ալ դազբեցաւ. այն ատեն սա՝ որ իր ազգայնոց ալ սիրելի էր, թէ անոնց կողմէն և թէ իր՝ նոր ազերագրով խնդրեց՝ (1582) որ ինքն անուանի թարգման Հայոց, և անոնց առեւարի միջնորդութեան շահուն երրորդ մասն ընդունի. ինչպէս որ թուրքաց առեւարին համար ալ կ'ընդունէր Միքայէլ Մամբրէ կոչուած Հրեայ թարգմանն։ Այս խնդրոյս կը հակառակին ուրիշ միջնորդը, իրենց այստի զրիանք ըլլալով, ուստի տէրութիւնն յանձնեց Հինգ գիտնոց՝ որ քննեն. անոնք երկու կողմէն ալ լսելով, և զերկուքն ալ զո՞ւ ընել ուզելով՝ պատասխանեցին առ Դուքսն (18 օգոստ. 1582) որ իրաւ զրիանք կ'ըլլար առ հասարակ միջնորդաց՝ եթէ Գէորգայ խնդիրն կատարուէր. բայց որովհետեւ շատ արդինք ունէր նաև շատ բարի վկայութիւններ, թէ իրեւ թարգման թէ իրեւ կարաւանապետ, և երբեմն իրեւ ձեռնոտու ներկայացուցաց տէրութեան (որ է ըսել գեսապանի կամ նուրիսակի պէս գործ մի), արժանի էր որ այդ միջնորդութիւնն ընէ իրեւ հասարակ միջնորդ, ինչպէս յիշեալ Մամբրէն ալ կ'ընէր։ Հաւանօրէն Ծերակոյսն ալ այսպէս վճռած է։ (*)

Այս վաստակով աշխատեր է Գէորգ քանի մի տարի ալ. 1588ին զադրեր է կամ զազդեցուցեր են զինքն այս գործէն. հարկ եղած է իրեն ալ նորէն զիմելու տէրութեան՝ որ անոր փոխարէն թոշակ մի տահմանեն իրեն. նոյնպէս ալ եղած են սոլյուրական քննութիւնք և վկայութիւնք Հինգ Գիտնոց վաճառականութեան (28 յունիս, 1588), նման վեց տարի տառչ տուածներուն, որոյ մէջ յիշեն կ. Պօլիս գացող Պայլեռուն բարի վկայագիրները, ուրոց առաջնորդ կ'ըլլար ճամբան և թարգման, իր թղթատարութիւնները և որիշ գործեր, որոց համար վայլէր որ տէրութիւնն նոր շնորհք մի ընէր, որպէս զի կարենայ զինքն ալ իր ընտանիքն ալ պահել։ (**) Անսարակոյս է որ տէրութիւնն վարձատորեց զԳէորգ, բայց ինչ և ո՛չափ տալն նշանակուած չի գոտայ։

Բայց Գէորգ ուրիշ վաստակ կամ գործ մ'ալ ունէր նայն իսկ միջնորդութիւն ըրած առաջնորդը. Հայոց Տան վերակացու ըլլալն, յաշորդելով ըզ-

1. Egli si è adoperato fedelmente in diverse occasioni importanti a Costantinopoli in esser Dragomano, et in esser Capo di Caravan, et in altre occasioni a servizio de rappresentanti la Serenità V. Per le quali sue buon'operationi fu medesimamente concesso a lui per l'Ecc. Collegio di potersi esercitar in Rialto per Sansero.

2. Avendo noi veduto diversi Fedi fatte da suoi Ecc. rappresentanti, che sono stati Baili in Costantinopoli per le quali appare egli esser Capo di Caravane nell'andar et ritorno di essi Bailij, et esser stato adoperato in Dragomano, et in far capitare lettere, et altre operationi, etc.

Աիմն, որ 1555ին ընտրուած էր և 1577ին վախճանած. այս տան գերազոյն պաշտպանք՝ անոր կտակոլէն (Մ. Ծիանի, տես ի բազմ. Խթ. հատ.) մեծ թաղական պաշտօնեայց տէրութեան՝ ժողովեցան (2 մարտի, 1577) և առաելութեամբ քուէից ընտրեցին զիւրոդ, իրբեւ յարմարագոյն շտկելու Սիմնի խառնակ և անկատար ժողած բաները: Հաւանորէն միշեւ ի մանն կեցեր է զիւրոդ ի վերակացութեան Տանն Հայոց, որոյ երբեմն Պահապան կոչուի ի դիւնա (Custos, Custode), երբեմն Տէր կամ Պաշտպան (Patoronus), երբեմն Առաջնորդ (Prior). մանն երբ եղած է՝ յայտնի չէ, այլ Կերերեի 1594 և 1595 միջոց. որովհետեւ առջի տարին մայիսի մէջ կը յիշոփ ինքն, իսկ երկրորդ տարին (1595) օգոստոսի 28, նոր տնպան կամ անտես կարգեցին Պաշտօնեայց զՄկանի Պարսկանայն: իսկ առաջին ինձ ծանօթ յիշատակ զիւրոգայ ՚ի Վէնետիկ՝ և 1569ին (28 յուլիսի), երբ վկայ և թարգման եղաւ քանի մի ազգայնոց, որը իրենցմէ մէկը գործակալ կարգեցին պահանջելու ի Մաքսապետաց փոխարէն մի իրենց ապրանքը զուր կավածանօք պահած ըլլալնոն համար: Շատ արիշ զատերու կամ վաճառականաց դրուղութեանց մէջ կը գտուի իր ստորագրութիւնն իրբեւ յկայ և թարգման, Նոտարաց դրութեանց մէջ, (լատինարէն Interpres, և Fidem faciens գրուած), ՚ի միջոցի 1584-9 տարիներու, որչափ ինձ ծանօթ է:

Վերին և նշանաւոր յիշատակ մ'ալ կը ընայ ըլլալ զիւրոգայ, եթէ ինքըն է և ոչ ուրիշ նոյնանուն և նոյնանուն հօր որդի (զիւրոգ որդի Յովինաննու), վասն զի այսպէս կը յիշուի առանց ուրիշ նշանի կամ գործոց մեր զիւրոգայ (թարգմանութեան, անպահութեան, և այլն). յիշատակն այս է որ 1594 տարույն սկիզբը (10 յանուարի) զիւրոգ երկու Միկանցի իրեն գործակալ կ'անուանէն նոտարի առջեւ, որ երբ երթան ի Միկան, այն քաղքին մէջ Սպահից թագաւորին գանձապետէն ուզեն և առանուն՝ նոյն թագաւորէն իրեն համար սահմանուած թոշակը, թէ չհատուցուածը և թէ անկէ վերջը հատուցանելիքը (¹): Յովինան Օլան կամ Օլոն քարտուղար Սպանիոյ գեսպանին ի Վէնետիկ՝ վկայած է ստորագրութեամբ՝ զիւրոգայ ծանօթ անձ ըլլալը և այդ գործակալութիւնը յանձնելը առ երկու Միկանցին (Պետր. Ֆլոն և Մկրտիչ Բյահմնան) (²): Ուր և է զիւրոգայ կամ Հայու մի համար պատուաւոր յիշատակ մի է այս, և մնայ փափագելի իր արդինքը զիտնալ կամ որ և է

1. Ad accipiendo a Thesauraria sive a Magistrato III. Thesaurario ejusdem... provisiarem decursam et decurrentum predicto Georgio Joannis Armeno concessam et assignatam per Reg. Majest. Chattol. super ipsam Thesaurariam Mediolani.

2. Այս ատեն Գէորգ կը բնակէր ի Բերդ (Castello) կամ Մ. Պետրոս անուածուած մեծ թաղը. երկու տարի վերջը (1571, Հոկտ.). կը յիշուի զիւրոգ որդի Յովինանու բնակած ուրիշ թաղի (Մ. Մարգարիտ) մէջ, և կը յարմարի երկրորդ անգամ կ. Պօլսէ դարձած ժամանակին:

ծառայութեան մի որ ըրած ըլլայ Սպանիական տէրութեան կամ Միլան քաղաքի. մեր Գէորգայ այլ եւ այլ վկայեալ ճարտարութիւնքն հաւանութիւն կ'ընծայեն՝ որ ինքն ըլլայ այս արդինաւորն, որդին Յովհաննու: — թէ իր աղերսից մէջ ըսածէն և թէ պաշտօնէից վկայութենէն իմացուեցաւ իրեն ընտանեաց տէր ըլլայն, սակայն մեզ անծանօթ մնան թէ կինն և թէ զաւակըն, և թէ իր մահուան ժամանակն և տեղին, բայց մեր գոտած այս չափ յիշատակներն ալ բաւական և շատ են զինքը թէ ճարտար, սրտոտ, կարող մարդ մի ճանցընելու, և թէ վեհեւոկոյ Հասարակապետութեան երախտաւոր անձ մի այնպիսի վտանգաւոր ժամանակ և տեղ՝ ըրած հաւատարիմ և գուարին ծառայութեանց համար, որով միանգամայն և պարծելի:

Համանուն Գէորգ ո. Յովհաննու՝ մեր ծանօթ Գէորգայ մահուան հաւանական թուականէն (1594) 20 տարի վերջ ալ յիշոփ, և շատ հեղ վաձառական կ'անուանի, բնակութեամբ ի Ս. Մարիամ խորտիկ թաղի. այլ եւ այլ անգամ նօտարաց առջեւ վկայ եղած է իր ազգայնոց դաշնագրութեանց. անգամ մ'ալ (1614, մայ. 12) վկայէ Նախիջեւանցի Պետրոսի ո. Յովհաննու համար, թէ ինչուան այն ատեն ամուրի էր:

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՉՆԿԲՈՋԱԾ

(Տես յ'էջ 236)

Փ. Մ. ՊՐՈՍԷ

Յետվէն—Մարդէնի՝ հայկական լեզուի ուսմամբ պարապող և շարունակողն եղած Պրոսէ, որոյ պիստոր մէկ արդիւնքն ալ է Վրաց լեզուի ուսումը մտցընելն ու բարգաւաճեցընել յԵկոպաս: իր կենսագրութիւնը՝ դիտութեան յարառեակ անձնանուիրութիւն մը կրնայ համարուիլ: — Ծնաւ Պրոսէ յամի 1802 ի Փարիզ ի 5 փետր. ուր հայրը վաճառականութեամբ կը զբաղէր: Ուսմանց նախնական ընթացքն կատարեց Օռէանի փոքր կղեց: